

ԵՐԱԿՐՈՆԵԱ

ՄԱՅՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 փետրվարի

**ՀՀ-ում Վրաստանի
Հանրապետության դեսպանին**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմասաշվիլիի հետ։

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու երկրների միջեւ պետական տարբեր մակարդակներում ձեւավորված համագործակցությանը, ինչպես նաեւ՝ հայ եւ վրաց ժողովուրդ-

ների դարերի պատմություն ունեցող կապերին։ Խոսվեց Հայոց եւ Վրաց եկեղեցիների հարաբերությունների եւ վիրահայության հոգեւոր-եկեղեցական կյանքում առկա խնդիրների մասին։

Հանդիպման ավարտին, հաջողություն մաղթելով դեսպանին հետագա ծառայության ընթացքում, Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ վերջինս կշարունակի իր աջակցությունը բերել հայ-վրացական կապերի առավել զորացմանը։

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Փետրվարի 16-18-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնված կազմով։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց եւ իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ԳՀԽ անդամներին՝ բարի ընթացք մաղթելով ժողովի աշխատանքներին։ Վեհափառ Հայրապետը նաեւ ուրախություն հայտնեց ժողովին մասնակցելու իրավիճակի ճշմարիտ նախագահ Պերճ Սեդրակյանի ներկայության համար՝ գոհունակությամբ ընդօժեցելով, որ վերջինս, իբրեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար, մշտապես իր գորակցությունն է ցուցաբերում Մայր Աթոռին։

Ժողովի նիստերն ատենապետեցին Կ. Պոլսի պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովհան արք. Տերտեւյանը։

Ժողովին քննության առնվեցին կանոնական ու կանոնադրական-իրավական, ազգային ու հասարակական, թեմական ու համայնքային, եկեղեցաշինական ու կարգապահական բազմաբնույթ հարցեր։

Ծիսական կանոնի եւ ապրիլի 24-ին կատարվելիք Բարեխոսական կարգի մասին։

ԳՀԽ անդամներին տեղեկացվեց, որ 2016 թ. սեպտեմբերին սպասվում է Հռոմի Սրբազան Զահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, եւ այցի կազմակերպման կապակցությամբ Մայր Աթոռը կապի մեջ է Վատիկանի հետ։

Հնդկաստանի եւ Շայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ Հայկազուն եպս. Նաշարյանը տեղեկություններ փոխանցեց Շայրագույն Արեւելքի, մասնավորապես՝ Յան-գուլի, Սինգապուրի, Բանգկոկի, Մյանմարի եւ Բանգլադեշի Դաքքա բաղադրի եկեղեցական համայնքների մասին։ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության՝ Բելգիայի, Հոլանդիայի, Իսպանիայի եւ Իտալիայի եկեղեցական համայնքների մասին զեկույցով հանդես եկավ հայրապետական պատվիրակ Վահան եպս. Հովհաննիսյանը։

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովին ներկայացվեցին նաեւ Մայր Աթոռում ընթացող բարեկարգման եւ կառուցապատման աշխատանքները։ Հատուկ անդրադարձ կատարվեց Մայր տաճարի ամրակայման եւ վերանորոգության աշխատանքների ընթացքին։ Նշվեց նաեւ, որ ընթացիկ տարում կավարտվի Վեհա-



Առաջին նիստին քննարկվեց ազգային-եկեղեցական ժողովի եւ եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման հարցը։ Չեկույցներով հանդես եկան ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Արշակ եպս. Խաչատրյանը եւ հիշյալ ժողովների օրակարգային հարցերի նախապատրաստումն իրականացնող, եկեղեցական կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի ատենապետ Հովհան արք. Տերտեւյանը։

Քննարկումների արդյունքում որոշվեց, նախապատրաստական աշխատանքների ժամանակատարությունից ելնելով, ազգային-եկեղեցական ժողովի գումարումը նախատեսել 2017 թվականին, իսկ 2016 թվականի հոկտեմբերին իրավիճակի եկեղեցական-ներկայացուցչական ժողով։

Ժողովին Գերագույն հոգեւոր խորհուրդը լսեց նաեւ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ամենամյա հիշատակության ծիսական կանոնի խմբագրման հանձնախմբի համակարգող Բագրատ եպս. Գալստանյանի զեկույցը՝ Ցեղասպանության նահատակների

րանի շենքի հիմնանորոգումը եւ «Էօնեկեան» դպրոցի սոր մասնաշենքերի կառուցումը։

Այս կապակցությամբ ԳՀԽ անդամները գոհունակություն հայտնեցին կատարված աշխատանքների առիթով՝ կարեւորելով համայն հայության հոգեւոր կենտրոնի բարեգործմանն ու պայծառությանն ուղղված ջանքերը։

Ժողովի ընթացքում ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2015 թ. գործունեության տեղեկագիրք եւ ֆինանսական հաշվետու զեկույցը։

Ըստ այդմ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում Մայր Աթոռում եւ թեմերում կազմակերպվել են 854 ոգեկոչման եւ հիշատակի արարողություններ, գիտաժողովներ, սեմինարներ, միջեկեղեցական արարողություններ, խաչքարերի օծումներ, ցուցահանդեսներ եւ բազմաբնույթ այլ միջոցառումներ։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցականության թիվը 742 է, որոնցից 54-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 48-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 40-ը՝ աբեղա, 469-ը՝ քահանա, 131-ը՝ սարկավագ։

Շարունակությունը՝ էջ 2

20 փետրվարի

Հռոմի կաթոլիկ համալսարանի Ա. Ջեմելլի հիմնադրամի տասվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հռոմի կաթոլիկ համալսարանի Ա. Ջեմելլի հիմնադրամի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյանի։

Նորին Սրբությունը, ողջունելով կաթոլիկ համալսարանի բժշկական ֆակուլտետի նախագահ պրոֆ. Ռոկկո Բելանտոնի, Ա. Ջեմելլիի համալսարանական հիվանդանոցի գլխավոր տնօրեն դոկտ. Էնրիկո Ջամպերդիի եւ Ա. Ջե-

լոմ, անդրադարձ կատարեց Քրիստոնեական քույր եկեղեցիների հետ ինչպես պատմության խորքերում, այնպես եւ այսօր ունեցած ջերմ կապերին ու փոխհարաբերություններին՝ դրա վառ վկայությունը նկատելով տարբեր առիթներով հոգեւոր պետերի այցերը Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Իրենց հերթին՝ պատվիրակության անդամները, շնորհակալություն հայտնելով հյուրընկա-



մելլի հիմնադրամի նախագահի միջազգային հարցերով խորհրդատու, դեսպան Պաոլո Դիոնիզիի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, գոհունակություն հայտնեց առողջապահության ոլորտում Ա. Ջեմելլիի հիմնադրամի եւ Հայաստանի միջեւ ձեւավորվող համագործակցության առիթով՝ հաջողություն մաղթելով նախանշվող համատեղ ծրագրերին։

Ամենայն Հայոց Հայրապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռի հիմնադրման պատմությունը եւ առաքելությունը հայ ժողովրդի կյան-

ության համար, խոսեցին Հայաստան այցի արդյունքների եւ համագործակցության ծրագրերի մասին, հատկապես՝ բժշկական վերապատրաստման եւ փոխանակման ուղղությամբ։ Անդրադառնալով Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Իզմիրյան» բժշկական կենտրոն կատարած իրենց այցին՝ հիմնադրամի ներկայացուցիչները Վեհափառ Հայրապետին փոխանցեցին իրենց տպավորությունները՝ կարեւորելով եկեղեցու ծառայությունն առողջապահության ոլորտում։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

20 փետրվարի

Իրանի մշակույթի եւ իսլամական կառույցների կազմակերպության նախագահին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական կառույցների կազմակերպության նախագահ, ԻԻՀ նախագահի խորհրդական Աբուզար Էբրահիմի Թորքամանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կարեւորելով հայ-իրանական միջպետական հարաբերությունները, նշեց, որ երկու բարեկամ ժողովուրդների կյանքը հատկանշված է բազմադարյա մշակութային սերտ կապերով: Այս առիթով Նորին Սրբությունը, ի դեմս պրն Թորքամանի, շնորհակալություն հայտնեց Իրանի իշխանություններին՝ մեծապես գնահատելով Իրանում հայկական հոգեւոր մշակութային արժեքների նկատմամբ դրսևորվող հոգատար վերաբերմունքը:

Աբուզար Էբրահիմի Թորքամանը ներկայացրեց ԻԻՀ մշակույթի եւ իսլամական կապերի կազմակերպության նպատակները եւ գործունեության շրջագիծը՝ ընդգծելով աշխարհի տարբեր մշակութային եւ կրոնական հաստատությունների ու միջազգային մշակութային կազմակերպությունների հետ կապերի գործադան ու համագործակցության կարեւորությունը:

Ամենայն Հայոց Հայրապետն ու Թորքամանը քննարկեցին նաեւ միջկրոնական երկխոսությանը վերաբերող հարցեր: Նորին Սրբությունը, մտահոգություն արտահայտելով Միջին Արեւելքում տիրող իրավիճակի եւ մասնավորապես քրիստոնեական համայնքների նկատման ու վերացման վտանգի առնչությամբ, իր հերթին անհրաժեշտ նկատեց միջկրոնական գործակցությունը՝ աշխարհի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման, հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության մթնոլորտի վերահաստատման համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան Սերգեյ Սարկիսովին

Փետրվարի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ պարգևատրման արարողություն: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո թանգրագույն շքանշան հանձնեց ազգային բարերար Սերգեյ Սարկիսովին (ՌԴ)՝ բարձր գնահատելով վերջինիս՝ հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն մատուցած ազգանվեր ծառայությունները:

Գոհունակություն է Հայրապետիս համար, որ եկեղեցաւեր ոգով ու սրտաբուխ ընծայաբերումով Դուք կարեւոր ներդրում բերեցիք նաեւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդանիստ Սր Գեւորգ Եկեղեցու վերանորոգության աստվածահաճո գործին: Փառաբանական աղոթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնությամբ եւ հավատավոր Մեր զավակների օժանդակությամբ բարեգործվեց պատմական սրբավայրը, որ դառնալիք շարունակ իր օրհնաբեր հարկի ներքո



Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը՝ նշելով, որ եկեղեցական անդամատան ավելի է պայծառանում՝ շնորհիվ եկեղեցականների ու աշխարհականների համատեղ ջանքերի: Անդրադառնալով մեծարյալին՝ տեր Վահրամն ասաց, որ տիար Ս. Սարկիսովը՝ իբրեւ ազգի եւ Եկեղեցու նվիրյալ զավակ, ունկնդիր աստվածային հրավերին, մշտապես ազգաշեն իր ներդրումն է բերել հայոց կյանքին եւ մասնակցություն ունեցել Հայ Եկեղեցու զորացման աստվածահաճո գործին:

Ե միավորում վիրահայ բարեպաշտ մեր ժողովրդին:

...Ի խորոջ սրտի աղոթքով Բարձրյալն Աստուծո շնորհներն ու օգնականությունն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Ամենախնամ Տերը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատություն եւ աստվածահաճո գործերի նորանոր հաջողություններ:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու պատվո թանգույն շքանշանով:

Իր հերթին տիար Սերգեյ Սարկիսովը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ մասնավորապես կարեւորելով Հայ Եկեղեցու առաքելությունը՝ աշխարհասփյուռ հայության ազգային ինքնության պահպանության գործում:

Վերջում, ինչպարժան օրվա առիթով, իր գնահատանքի ու օրհնության խոսքը մեծարյալին ու ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ ազգային կյանքում իրականացրած օգտաշատ ծառայությունների դիմաց, ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի խնդրանքին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո թանգույն շքանշան շնորհվեց հայ ազգի ու Հայ Եկեղեցու նվիրյալ զավակ Ս. Սարկիսովին:



«Ճանաչում ենք Ձեզ անձնապես եւ տեղյակ ենք Ձեր ազգանվեր եւ եկեղեցաշեն բազմարդյուն վաստակին: Դիվանագիտական գործունեությամբ Դուք կարեւոր ջանքեր եք ներդրում ի խնդիր մեր երկրի զորացման ու առաջընթացի, նաեւ ազնիվ բարերարություններով սատարում հայրենաշեն տարբեր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպեսզի առավել բարձր ու բարձրակարգ լինի մեր ժողովրդի զավակների կյանքը Հայաստանում եւ Արցախում:

Խոսելով Թբիլիսիի առաջնորդանիստ Սր Գեւորգ Եկեղեցու վերանորոգման կարեւոր նախաձեռնության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր իր գնահատանքը հայտնեց տիարք Ռուբեն Վարդանյանին եւ Սերգեյ Սարկիսովին՝ իրենց նախանձախնդիր ոգու համար:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Սկիզբը՝ էջ 1

ՀՀ զինված ուժերում իրենց ծառայությունն են բերում 51 հոգեւոր սպասավոր, քրեակատարողական 12 հիմնարկում՝ 7-ը:

2015 թ. Մայր Աթոռի բաժիններում աշխատել է 1206 անձ, Հայաստանի թեմերում եւ Արցախում՝ 1359:

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ուսանել է 295 սան, որից 98-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, 81-ը՝ Սեւակի Վազգենյան դպրանոցում, 43-ը՝ Հռոմեական թեմի Թորքամանյան ընծայարանում, 31-ը՝ քահանայից պատրաստման եռամյա լսարանում, 42-ը՝ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում: «Էռնեստեան» հանրակրթական դպրոցում ուսանել է 324 աշակերտ: «Էռնեստեան» մանկապարտեզ հաճախել է 45 մանուկ:

2015 թ. շարունակել են գործել 7 հայորդյաց տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում)՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնը, որտեղ հաճախում է շուրջ 3500 երեխա: Տարվա ընթացքում բոլոր հայորդյաց տներում իրականացվել է 282 բազմաբնույթ միջոցառում:

Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցություն է հատկացվել անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ ե-

րեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին եւ զինծառայողներին: Հաշվետու տարում Մայր Աթոռի կողմից դրամական եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել 20000 անձի:

2015 թվականին իրենց բնականոն գործունեությունն են շարունակել Մալաթիայի, Արաբկիրի, Նորքի, Էջմիածնի, Վանաձորի բարեգործական ճաշարանները, որտեղ օրական սնունդ է ստացել ընդհանուր թվով 1000 անձ: «Նագաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնում խնամվում է 14 պատանի: Իր գործունեությունը շարունակել է ծավալել «Իզմիրյան» բժշկական կենտրոնը՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելով հիվանդներին:

2015 թ. Հայաստանի եւ Սփյուռքի թեմերում, հայրապետական պատվիրակություններում օծվել է 21 նոր եկեղեցի: Հիմարարության եւ վերանորոգման փուլում է գտնվում 34 եկեղեցի: Թեմերի հովանու ներքո գործել է 271 կիրակնօրյա դպրոց:

Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց ներկայացված գեկույցը՝ ողջունելով իրականացվող լայնածավալ գործունեությունը եւ Հայոց Եկեղեցու առաքելության արդյունավորմանն ուղղված նվիրյալ ջանքերը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ ծայրագույն վարդապետության աստիճանի պաշտպանություն



Փետրվարի 20-ին, օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ շնորհվեց ծայրագույն վարդապետական աստիճան: Կարգը կատարվեց ձեռնամար Գրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Յովհաննիսյանի:

Փետրվարի 19-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ծայրագույն վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Ծայրագույն վարդապետության աստիճանի համար «Նորկոտակարանյան եւ պարականոն գրականության եւ ջատագով հայրերի մեկնողական սկզբունքների ծագման տեսական հիմքերը (սկզբնաղբյուրների պատմամասնական բանական վերլուծությունը)» թեմայով թեզ պաշտպանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների եւ պաշտոնական մամուլի բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը: Պաշտպանությունն սկսվեց ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանի խոսքով: Աշխատության վերաբերյալ իրենց դիտարկումները կատարեցին նաեւ հանձնաժողովի անդամներ՝ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս

մի առաջնորդ Վահան եպս Յովհաննիսյանի:

Արարողության ավարտին Վահան սրբազանը, անդրադառնալով Շահե վարդապետի գործունեությանը, իր շնորհավորական խոսքում մասնավորաբար ասաց. «Որպես ավագ եղբայր՝ տարիների ընթացքում տեսել եմ հայր Շահեի հոգեւոր աճն ու նրա հիանալի աստվածաբանական եւ առաքելական պատրաստվածությունը: Հայր սուրբն ակադեմիական բարձր տիտղոսներ է ստացել Ֆրանսիայում եւ այսօր էլ շարունակում է իր աստվածաբանական հետազոտումները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրատարակելով բազում հոդվածներ եւ խմբագրելով Մայր Աթոռի ամսագիրն ու զանազան այլ գրքեր»:

Սրբազան հայրը մաղթեց, որ ամենակարող Աստված Իր Սբ Հոգու շնորհները շարունակի հեղել Շահե ծայրագույն վարդապետի վրա, որպեսզի վերջինս առավել զորանա եւ Տիրոջ օրհնությամբ շարունակի իր պայքարը խավարի դեմ՝ քարոզելով Աստծո սերը, շնորհներն ու խաղաղությունը:

Փետրվարի 21-ին հայր Շահեին, ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Յովհաննիսյանի, ընդունեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



Նաջարյանը եւ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Յովհաննիսյանը:

Օգտակար դիտարկումների համար շնորհակալություն հայտնելով հանձնաժողովի անդամներին՝ հայր Շահեն անդրադարձավ աշխատության նպատակին եւ բովանդակությանը, պատասխանեց ներկաների հարցերին:

Հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց թեզի պաշտպանությանը եւ արժանի համարեց Շահե վրդ. Անանյանին ներկայացնելու ծայրագույն վարդապետության աստիճանի տվչության:

Նորին Սրբությունը, ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու առիթով իր գնահատանքն ու հայրապետական օրհնությունը փոխանցելով հայր Շահեին, վստահություն հայտնեց, որ հայր սուրբը նույն նախանձախնդիր ծառայանքներով հետագայում եւս կշարունակի իր հոգեւոր ու գիտական սպասավորությունը բերել ի նպաստ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը Շահե ծայրագույն վարդապետին շնորհեց վարդապետական լանջախաչ:

28 ժամ եգիպտոսում Ճամփորդական ակնարկ



Եգիպտոս այցելությունն ինձ համար երազանքի պես մի բան էր. տեսնել հազարավոր տարիների պատմություն ունեցող երկիրը, վայելել մարդկության բնօրրանից ծագող հսկայական մշակութային շերտը...

Բախտի բնահաճույքով թե պատահականության բերումով՝ ես, սակայն, չկարողացա տեսնել Եգիպտոսը: Պետությունը նոր օրենք էր սահմանել, որով օտարերկրացիների համար մուտքը երկիր՝ առանց նախօրոք ձեռք բերված անցագրի, արգելվում էր: Սակայն սահմանի սպասարահում (այստեղ այսպես կոչենք՝ Պետական գրասենյակում առանձնացված սենյակը «հատուկ մարդկանց» համար) հավաքված «անձնակազմը» բավական ներշնչող էր. մի գերմանահպատակ դպրոցի ուղղափառ գրականագետ էր՝ Գերմանիայից, մի շեյխ՝ Զուլեյխից, մի քանի մահմեդական լիբերալ՝ տարբեր երկրներից, լիբերալ մի օրիորդ՝ Սոմալիից, եւ բազմաթիվ այլ եվրոպացիներ, նույնիսկ մի քանի եգիպտահպատակ... մի խոսքով՝ տարբեր ազգությունների, մշակույթների ու մտածողությունների մի խայտաբղետ «խճանկար»: Հետաքրքիր իրավիճակ. մահմեդական ամենածայրահեղ կրոնավորից մինչեւ եվրոպական ամենաառաջադեմ գաղափարներով սնված ու դաստիարակված իսլամի գավակներ... Ճիշտ է, նրանց խոսակցության մեծ մասն արաբերենով էր, որը ես չէի հասկանում, սակայն պահվածքն ու կապվածքը, ինչպես ասում են, լավագույն խոսքերն էին, որոնք կարելի էր ըմբռնել եւ վերլուծել: Առավոտյան 5:20-ին աղոթքի՝ Նամազի սկսվելուն պես ազատական մահմեդականներից մի քանիսը բավարարվեցին «Ալահ-ու աքբար» արտասանելով, իսկ ավելի ուղղափառ մահմեդականներն առանց վրդովվելու, որ իրենց աղոթքի պահին մյուս հավատակիցները խոսում էին եւ նույնիսկ ծխում, շարունակեցին Նամազը:

Ուշադրությունս անմիջապես գրավեց Սոմալիից ժամանած եւ մեզ հետ «բանտարկված» օրիորդը. նա չմոտեցավ եւ չմասնակցեց Նամազին, այլ, մի անկյուն քաշված, լուռ ու կենտրոնացած կարդում էր Ղուրանը՝ արաբերենով: Հակադրությունն առաջին իսկ հայացքից խիստ հետաքրքիր էր: Նամազից հետո հարցրեցի շեյխին եւ նրա հետ Նամազ անող երկու այլ մահմեդականների՝ գիտե՞ն արդյոք բավարար չափով հին արաբերենը՝ Ղուրանը բնագրով կարդալու համար: Իհարկե, անգլերենով տրված հարցս ստիպված եղան թարգմանել (նրանցից ոչ ոք չգիտեր անգլերեն), եւ պատասխանը հիասթափեցնող էր: Նույնիսկ շեյխը ղուրանյան արաբերենն այդքան էլ լավ չգիտեր. նրան պարզապես գրավում էր դասական արաբերենի գեղեցկությունը. նրա կարծիքով՝ բավարար պատճառ՝ պաշտամունք կատարելու համար: Իսկ ահա սոմալուհին մաքուր ֆրանսերենով ինձ սկսեց բացատրել ղուրանյան արաբերենի նրբությունները, քերականական ու ոճական առանձնահատկությունները եւս: Առաջին հայացքից իսլամի ու հոգեւոր պաշտամունքի հանդեպ անտարբեր այդ լիբերալ մուսուլմանուհին ինչպիսի՞ խորությամբ էր ուսումնասիրել Ղուրանը, ի՞նչ լրջությամբ ու կենտրոնացումով էր կարդում իսլամի սրբազան գիրքը:

Անակնկալի եկած՝ սկսեցի մտքումս շարադրել մտածումներս (համակարգիչս եւ թուղթ-գրիչը ժամանակավորապես «առգրավված» էին): Կրոնի, այս պարագայում իսլամի մեջ ի՞նչ ծայրահեղ ու հակասական երեւույթներ են առկա: Իրենց խստապահանջությամբ ու կրոնի մոլեռանդ կիրարկումով, երկար մորուքներով եւ ծփացող «էնթերիներով» հպարտ քայլող շեյխի եւ մաքաբ ուղղափառ մուսուլմանների համար Մուհամմեդի ավանդած պատգամը վարվելակերպ է, օրենքների ժողովածու, ընտանեկան ու պետական կարգը հիմնավորող օրենսդրություն, ի վերջո՝ պետականաստեղծ գաղափարախոսություն: Սոմալուհու հետ համեմատությունն այս ամենը ներկայացնում էր մեղալի մյուս երեսով:

Նա Ղուրանը կարդում էր իբրեւ հոգու եւ սրտի կերակուր, փորձում բառ առ բառ հասկանալ եւ իր սուր մտքով կենտրոնացնել այն հիմնական պատգամը, որ տալիս է Ղուրանը պարզ հավատացյալներին: Ներքին հոգեւոր ուժը, որ անդրանցնում է կրոնական «պիետիզմը»՝ իբրեւ մաքաբ «իզմերի» կողքին առկա երեւույթ, մուսուլմանական ծիսապաշտության ու շարիաթի հանդեպ չափազանցված պաշտամունքն է: Սոմալուհին մարմնավորում էր իսլամի՝ իբրեւ կրոնի հանդեպ կարծրատիպերը կոտորող մտքի ու հոգու մտածված կարողությունը, ազատ եւ

բանական կամքով կրոնը հասկանալու անվերջանալի ջանքը: Վայրի, բայց հմայիչ ու խելացի դիմագծերի միախառնումը, իսլամի հետեւորդներին բնորոշ վճռական եւ հաճախ պարտադրող հայացքը նրան հաղորդում էին՝ իր մարգարեի ժամանակաշրջանի պարզ, բայց ջերմեռանդ ու անկեղծ հավատացյալի նախատիպի բոլոր տվյալները...

Այս երկու տիպերի համեմատությունը, որն ինձ պարտադրվեց իմ կամքից անկախ՝ հանգամանքների բերումով, լավագույնս օգնեց կենդանի փորձառությամբ (մի քիչ թերեւս զգացմունքային ու ռոմանտիկ նրբերանգներով շաղախված) հասկանալու իսլամի ներկայիս զարգացման առանձնահատկությունները: Մի կողմից՝ Ղուրանի ոգին ու շատ դեպքերում նույնիսկ լեզուն չհասկացող մոլեռանդ եւ պիետիզմի գերադրական աստիճանին տրվող հավատացյալներ, մյուս կողմից՝ Ղուրանն աչքով, ականջով, մտքով ու հոգով ամբողջապես ըմբռնել եւ նույնիսկ մեկնաբանել փորձող պարզ հավատացյալներ (այս դեպքում՝ կին, որը նույնիսկ տղամարդկանց հետ Ղուրան կարդալու իրավունքը չունի): Ղուրանի ու նրա հոգեւոր պատգամի հետ մեկ-միասնական դառնալու բուռն ցանկությունը մեկդի է թողնում արտաքին բոլոր հանգամանքները. մարդ աշխատում է նախ իր, ապա եւ իր շրջապատի բարելավման ուղղությամբ:

Նամազի եւ անվերջ երկրպագության արդյունքում պրկված ոտքերով, հեծյալին բնորոշ թեք քայլվածքով եւ ճակատին հայտնված սեւ այտուցով մուսուլման եղբայրների համար հոգեւոր այդ ճիզն անհրաժեշտ է. սահմանված պաշտամունք եւ իմամի կամ շեյխի պատգամների կատարում,՝ ահա եւ իսլամն իր ամբողջ «պարզության» եւ «գրավչության» մեջ: Սակայն սրա տակ իրականում թաքնվում է մակերեսային գիտելիքից ծնվող զարհուրելի ինկվիզիտորությունը, պարզ ու ամեն ինչով նախատեսելի սահմանների մեջ մարդու մարմնի եւ հոգու դատաստանի իրականացումը:

Այսօրվա գլոբալ հասարակության ձեւավորման ճանապարհին, իհարկե, իսլամը տրամադրում է նոր, հակադիր միջոց: Այն հիմնականում կենցաղային իսլամն է. ոչ թե կրոնի եւ կրոնականի միստիկ, խորհրդապաշտական զգացումից ծնված, այլ պարզ ու տգետ մարդկանց համար նույնչափ պարզ եւ տգետ եզրերով թարգմանվելու պատրաստ գաղափարախոսություն: Ավանայից, վերանալով այս կամ այն կրոնի հանդեպ մասնավորեցումներից, հարց եմ տալիս ինքս ինձ. իսկ մի՞թե նույնը չէ նաեւ մյուս կրոնների պարագայում: Մի՞թե այդ կենցաղականացման ու գաղափարականացման դեպքում կրոնը չի դառնում պարզապես գործադրելի եւ պարտադրելի չափանիշ: Մի՞թե այս դեպքում այն չընդունողների համար մահվան ու պատժի սպառնալիքի ուրվականը չի ստվերագծվում հորիզոնին: Այո՛, նման մոտեցումով կրոնի մեկնության դեպքում ճիշտ եւ ճիշտ իրապարակ է իջնում Ֆ. Դոստոևսկու նշանավոր «Մեծ հավատաքննիչը». նրա համար ի՞նչ՝ Հիսուս, թե՛ Սուլիման, Բուդդհա, թե՛ Մովսես... Նա նրանցից ավելի լավ գիտի, թե այսօրվա բթամիտ ու անգրագետ հավատացյալին ի՞նչ է անհրաժեշտ:

Այս մտածումների մեջ էի, երբ հանկարծ դուռը շրխկոցով բացեց մի ահռելի եգիպտացի՝ իր երկրին բնորոշ խափշիկ կերտվածքով եւ մահմեդականին հատուկ տոնով, եւ հայտարարեց. «Դուք ազատ եք, ձեր չվերթը երկու ժամից է»: Այո՛, ո՛չ ողջույն, ո՛չ որպիսության մասին հարցում, ո՛չ էլ ներողություն... Չհասկացա նույնիսկ՝ այս հսկայամարմին սպան հավատացյալի առաջին, թե՛ երկրորդ տիպին էր պատկանում: Դե՛, կարծեմ, այս պարագայում դա այնքան էլ կարեւոր չէր, քանզի ես արդեն որոշել էի գրի առնել մտքերս....

*Շահե ծ. վրդ. ԱՆԱՆՅԱՆ
Կահիրե, Եգիպտոս
31 հունվարի*

Ավետարանը մեզ հայտնում է, որ երբ ծիսական մաքրության ժամանակը լրացավ, Հովսեփն ու Մարիամը մանուկ Հիսուսին տարան տաճար՝ Տիրոջն ընծայելու՝ ըստ Մովսիսական օրենքի: Սուրբ Հոգուց առաջնորդվելով տաճար եկած Սիմեոն ծերունին, ում խոստացված էր մահ չճանաչել, մինչև տեսներ Տիրոջ Օծյալին, իր գիրկն առնելով Մանկանը, ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, համաձայն Զո խոստման՝ թող որ Զո ծառան մեռնի խաղաղությամբ, քանզի աչքերս տեսան Փրկչին...» (Դուկ. Բ 29): Ահա ավետարանական այս պատմությունն էլ քրիստոնեական գեղեցիկ տոնի՝ Տյառնընդառաջի հիմքն է հանդիսանում, երբ Սիմեոն ծերունու օրինակով մենք դուրս ենք գալիս Տիրոջն ընդառաջ: Եվ հաճախ, մեկին լավը կամենալով, բարեմաղթում ենք. «Սիմեոն ծերունի դառնաս», այսինքն՝ երկար տարիների կյանք ունենա, իղձերը եւ նպատակները կատարվեն:



Որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ այս տոնի արմատները եւ կրակ վառելու սովորույթն ավելի հին են եւ գալիս են նախաքրիստոնեական շրջանից՝ կապված կրակի պաշտամունքի հետ: Իսկ քրիստոնեական ընկալումով՝ Տյառնընդառաջի կրակը խորհրդանշում է ճշմարիտ Լույսը, եւ եկեղեցին արգելում է հեթանոսական իմաստով կրակավառությունը: Տոնացույցը թելադրում է. «Խոտելի է շրջելն գիրով»: Զրիստոսն է աշխարհի լույսը, եւ այդ խորհրդով ենք մոմեր վառում, տուն տանում: Ճանաչելով Կենդանի Արեգակին եւ Լույսին՝ մենք մեր ընծայումն ուղղում ենք Զրիստոսին, ոչ թե հեթանոսական կրակին: Հուրը, ըստ Աստվածաշնչի, ունի սրբագործող, փորձիչ հատկություն (Դան. Գ 8-97), պատժիչ հատկություն (Դ. Թագ. Ա 1-11), մաքրագործող նշանակություն՝ իբրեւ Սբ Հոգուն ուղեկից հատկություն (Մատթ. Գ 11-12): Տյառնընդառաջի տոնը նշվում է անշարժ ամսաթվով՝ փետրվարի 14-ին, քանի որ կապված է Սբ Ծննդյան տոնի հետ (40 օր

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԶԸ ժողովրդական կենցաղում

հետո): Նախորդ օրը՝ փետրվարի 13-ի երեկոյան, կատարվում է Նախատոնակ: Տյառնընդառաջը ժողովրդի մեջ լայն տարածում ունեցող տոներից է եւ նշվել է (շարունակում է նշվել) մեծ շուքով, ուրախությամբ ու հանդիսություններով: Հայաստանի տարբեր շրջաններում տոնի ժողովրդական ավանդությունների, առանձնահատկությունների մասին ուշագրավ ու հետաքրքրական տեղեկություններ ենք գտնում Ե. Լալայանի (ԱՀ, գիրք 10, Թիֆլիս 1903), Զաքերյունու (ԱՀ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901), Բենսեի (ԱՀ, 2 գիրք, 1900), Յ. Մուրադյանի (ԱՀ, 2 գիրք, Թիֆլիս 1900) եւ այլոց մոտ: Աշխատություններից պարզ է դառնում, որ հայ իրականության մեջ գոյություն են ունեցել Տյառնընդառաջի տոնակատարության հետ կապված ազգային պատկերացումներ, սովորույթներ, ավանդություններ, որոնցից ոչ բոլորն են պահպանվել այսօր: Ազգագրագետ Սամվել Մկրտչյանը նշում է, որ հայոց կենցաղում մինչև 20-րդ դարի 30-ական թթ. գրեթե ամբողջությամբ պահպանվել էր Տրընդեզի ավանդական ծիսահամալիրը՝ տոնածիսական ուտեստը, նորապսակների ազգականների փոխայցելությունները ու նվիրատվությունները, բաժինքի կամ օժիտի ավանդույթը եւ հատկապես՝ ծիսական խարույկի հետ կապված արարողությունները, գուշակությունները, որոնց միջոցով ակնկալվում էր սպասվող բերքի առատություն, անձնական երջանկություն եւ բոլոր տեսակի հիվանդություններից ձերբազատում: «Տյառնընդառաջ» բառը Դազախում աղավաղված ձեւով կոչվում է «Տօռնջ տօռնջ», Հին Ջուղայում՝ «Տառնջ տառնջ», Վաղարշապատում՝ «Դըրընդեզ», Դարալագյազի բնիկների մեջ՝ «Դառառանջ», գաղթականների մեջ՝ «Տերինտառաջ» կամ «Տանտառեջ»: Նշման տոնակատարությունները հիմնականում կապված էին տոնի խարույկի հետ, եւ չնայած դրա՝ տարբեր վայրերում վառելու որոշակի տարբերությունների, ուրախությունը համընդհանուր էր: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարտավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները: Երբ քահանան, կատարելով կարգը, իր մոմով առաջինը վառում էր դեզը, վառում էին նաեւ շարքի կանգնած նորապսակները, եւ այլեւս՝ ոչ ոք: Շիրակում եւ Բասենում դեզը վառելու իրավունքը եւս վերապահված էր նորապսակներին: Դարալագյազի ժողովրդի մեջ դեզը վառելու իրավունքը քահանայից հետո դարձյալ նորապսակներինն էր: Դազախի գյուղերում դեզը վառվում էր միայն եկեղեցու մոտ: Նորապսակներից հետո կարող էր վառել ամեն ոք:

Ե. Լալայանը նշում է, որ Գանձակի գավառում նորապսակները ցրտենու (քանի որ հավատում էին, որ Քրիստոսը ծնված ժամանակ այդ ծառի ճյուղերով է փաթաթվել) ճյուղեր էին բերում եւ եկեղեցու բակում դարսում, եթե երիտասարդներից մեկը զլանում էր այդ պարտականությունը կատարել, քահանան նրանից տուգանք էր վերցնում: Երեք անգամ ամուսինները պատվում էին խարույկի շուրջը, երեքական անգամ թռչում դռնատունքի վրայից, երեխաներն էլ մի հավ գրկած կանգնում էին խարույկի շուրջը, որպեսզի մեծ պասին հավերը հաճախ ձու ածեն: Զաքերյունու գործում կարդում ենք, որ դեզի վրայով ցատկերը նրա համար էր, որ ազատվեին ամեն տեսակի «չլավից» ոչ լավից, վատից: Մի քանի օրվա ծննդաբերած կնոջը նույնպես թռցնում էին կրակի վրայից, որպեսզի քառասունքից ազատվի: Երբ քահանան կարդում է Ավետարանի այն տեղը, ուր Սիմեոն ծերունին ասում է Մարիամ Աստվածածնին՝ «Եւ ընդ քո իսկ անձն անցցե սուր» (Դուկ., Բ 35), իսկույն ամեն մեկը ծածկաբար կտրում է մոմի կտոր եւ մոտը պահում, որպեսզի օձը երբեք չկծի իրեն: Նույն նպատակով էլ չարից ազատվելու համար կրակով այրում էին իրենց շորի որեւէ մասը (Դարալագյազի գաղթական ժողովուրդը): Բենսեն նշում է, որ Բուլանջի կամ Հարք գավառում երեխաներն իրենց տրոնդեզի երկար ավելները բռնած երգում էին. *Տրնդեզ՝ դարմանը կես, Առնեմ գշուան, Ելնամ ի դեզ...* Եւ վառելով ավելը՝ դնում տանիքների վրա: Վաղարշապատում եւ շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը հրավիրում է աղջիկներ եւ երիտասարդ հարսներ՝ տոնը կատարելու: Մարդիկ նաեւ հավատում էին, որ եթե հիվանդին երդիկով դուրս բերեին դեզի մոտ, կլավանար: Դեզերն առանց բացառության պետք է լինեին յուրաքանչյուր տան տանիքի վրա: Դեզի վրայից ցատկելուց հետո երիտասարդի բարեկամները բերում էին խոնջան՝ հարսի համար տեսակ-տեսակ ուտելիքները (Հին Ջուղա): Այնուհետեւ դեզից վերցնում էին կիսայրած փայտ եւ տանելով տուն՝ մի ապահով տեղ դնում (Դազախ): Պառավները սրբազան կրակով վառում էին հավերի բմբուլները, որպեսզի ստերը չման (Հարք գավառ): Խարույկից նաեւ մի կրակ տանում էին տուն եւ վառում երեկոյի մոմը, որպեսզի «բախտը տան վրա լինի»: Որոշ վայրերում դռները պահում, Սբ Սարգսի փոխիկի հետ խառնում եւ կարկուտ գալիս դեպի երկինք էին փչում, որպեսզի կարկուտը դա-



դարի, կամ շաղ էին տալիս բաղերի վրա, որպեսզի չկարկտահարվեն: Գանձակի գավառում, ինչպես նշում է Ե. Լալայանը, մոխիրը ջրի մեջ լուծում եւ խմեցնում էին ծննդկանին, որ հեշտությամբ ազատվի, հիվանդին, որ առողջանա, լցնում էին հավաքում, որ հավերը հաճախ ձու ածեն, նաեւ պահում, գարնանը շաղ էին տալիս արտերում, որպեսզի մուկը չկտրի ցանքերը: Համշենցի հայերը մոխիրը եկեղեցուց տանում էին իրենց տուն՝ դեղի համար, որ ցաված տեղը քսեն: Որոշ վայրերում խարույկի մոխիրը թափում էին տան չորս անկյուններում, որպեսզի օջախը «բարաքյաթով» լինի: Կանայք ջրում լուծված մոխիրը նաեւ լցնում էին կոնձների մեջ, որպեսզի դրանք առատ լինեն: Բազմազան էին նաեւ տոնի կատարվող գուշակությունները: Դեզի ծիսի թեքվելը, օրինակ, նշան էր այս կամ այն կողմի բերրիության: Երեկոյան հրացաններ էին արձակում, եւ արձակման ձայնից որ կողմ որ փախչում էին շները, այդտեղից հողի առատություն էր սպասվում (Դարալագյազ): Հնում հավատում էին, որ տոնի երեկոյան ծնված երեխան շատ չար եւ կրակոտ պետք է լինի, քանի որ «կրակի հետ էր ծնվում»: Ազգագրագետ Ս. Մկրտչյանը նշում է, որ տարածված էր նաեւ նոր հանգուցյալների հարազատներին այդ տոնի միջոցով սգից հանելու սովորույթը: Մուշում եւ Տարոնում քավորիկն ու սանամայրը գնում էին սգավոր բարեկամի տուն եւ միասին այցելում եկեղեցի: Ժամերգությունից հետո միասին դուրս էին գալիս եկեղեցու գավթի եւ միասին ներս մտնում՝ համարելով, որ Տիրոջն ընդառաջ եկան, որից հետո վշտի մեջ գտնվողները կարող էին արդեն «արեւով դուրս գալ». այսինքն՝ սգից դուրս եկած էին համարվում:

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Նաւասով խոստովանիմ»-ը Մայր տաճարում կընթերցեն դպրոցականները



Օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մեծ պահքի շրջանում՝ ուրբաթ օրերին, Հանգստյան ժամերգության մեջ գե-

տեղված ս. Ներսես Շնորհալի Հայրապետի (1166-1173 թթ.) «Նաւատով խոստովանիմ» աղոթքները Մայր տաճարում կընթերցեն Հայաստանի հանրակրթական տարբեր դպրոցների աշակերտներ: Փետրվարի 19-ին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հանգստյան ժամերգության ընթացքում ս. Ներսես Հայրապետի աղոթքներն ասացին Մայր Աթոռի «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի սաները: Արարողության ավարտին Նորին Սրբությունը մանուկներին ու պատանիներին բերեց իր հայրական օրհնությունն ու գնահատանքը:



Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ Անանիա աբեղա Ծատուրյանը եւ Համբարձում աբեղա Արաքյանը ծառայության են կոչվել Մայր Աթոռի վանդակի տեսչությունում:

Լրատվական կյուրերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ

Սկիզբը՝ 2015-ի թիվ 18-21,
23-24 եւ 2016-ի թիվ 1, 3

Հանգային մտածողությամբ ստեղծագործելիս հեղինակի մեջ ծնվում է հայեցողական սպասողականություն, երբ գրիչը դնում են բերանին եւ սպասում հարմար հանգի: Այս կարգի գործերում հեղինակի զգայական-մտածական ներքին հորդումը ուրուշակի տեղերում հանդիպում է հանգային արգելքների եւ պարտավոր է այդ արգելքները հաղթահարել անհրաժեշտ հանգաբաժների ստեղծումով, հակառակ դեպքում ուղեփակոցի գերանը կիջնի խոսքի ճանապարհին եւ կկանգնեցնի նրա ընթացքը: Իսկ հանգը նման դեպքերում միշտ չէ, որ բխում է խոսքի եռությունից. անհրաժեշտ է բառեր ընտրել, բառեր փոխել, ինչն էլ իր հերթին փոփոխություն է մտցնում պատկերի մեջ, մտքի մեջ: Ստեղծվում է ավելորդ խաթարում: Ճիշտ է նկատում տաղաչափության հարցերով զբաղվող մասնագետը. «Միտքն է, որ պետք է վարել հանգը, եւ ոչ թե հանգը հրամայե մտքին» (Հ. Թիրեաքեան, Հայկական տաղաչափութիւն, Նյու Յորք, 1922, էջ 68): Նման արգելքները հաղթահարելու համար բանաստեղծները երբեմն թռչում են այդ ուղեփակոցի գերանի վրայով եւ ստեղծում մեկ-երկու չհանգավորված տող՝ դրանով իսկ փրկելով անհրաժեշտ միտքը ծախողումից: Այդպիսի դեպքեր հատկապես նկատելի են քառատող տների երրորդ տողերում:

Սակայն նման թռիչքները ելք չեն: Ելք գտնելու համար աստիճանաբար սկսեցին փոխել հանգի հնչեղության որակը: Շրջանառության մեջ մտան առձայնությամբ, մոտավոր հանգերը, որոնք ենթադրում են բառերի լայն ընտրություն եւ ինչ-որ չափով ստեղծագործական ներշնչանքն ազատում համանման հնչեղությունների պարտադիր աքցանից: Ստեղծվեց մոտավոր հանգի իշխանություն: Հայ գրա-

կանության մեջ մոտավոր հանգի օրինակներ թեւեւ կան Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի պոեզիայում, այնուամենայնիվ, դա միտում դարձավ Չարենցի ստեղծագործության մեջ, ում ազդեցությամբ այն կիրառեցին Նաեւ Ն. Չարյանը, Տարոնցին, Սեւակը, Էմինը, Կապուտիկյանը, Դավթյանը եւ ուրիշներ: Կենդանի շարժուն խոսքը, ճշգրիտ, մաքուր հանգերի համահնչունությամբ հասնելով խիստ ներդաշնակության, չի կարող դրսևորել իր ներքին շարժումը, հոսքը: Լրիվ հանգերն ստեղծում են ավարտուն հնչյունական ամբողջության, փակ չափական, հնչյունական միություններ եւ կանխում ասելիքի ազատ հորդումը:

Հնչյունային կապակցումների այս ձեւը, որ ինքնուրույն ու յուրահատուկ կառուցվածք է, փաստորեն վերափոխված ձեւով ներառում է հանգը, բայց դա արդեն կանոնավոր կազմության տների մեջ գործող հանգը չէ: Այս կառուցվածքներում հանգը չունի խոսքի համաչափ, երգեցիկ կշռությո ստեղծողի, պատկերների կանոնավոր շարժումը կարգավորողի այն դերը, ինչ փակ, կայուն տողաշարքեր ունեցող տների մեջ: Եթե փակ կանոնավոր տների մեջ հանգը չափական կառուցվածքի էական տարր է եւ իրենով ազդարարում է չափական շարքերի ավարտն ու ամբողջական կշռության պարբերության ամփոփումը, ապա այս դեպքում այն կատարում է միանգամայն այլ դեր, ինչը բացատրվում է խոսքի ընդհանուր կառուցվածքի փոփոխությամբ: Նախ՝ վերանում է կանոնավոր, ավարտուն տուն հասկացությունը, ինչի հետեւանքով խախտվում է հանգի կայուն դասավորության հնարավորությունը, եւ ապա տողաշարքերը կորցնում

ՀԱՆԳԸ



են իրենց չափական հավասարությունը (մի տողը կարող է լինել 4, 5 կամ 6 վանկանի, իսկ մյուսները համապատասխանաբար՝ 8, 10, 12, եւ այս ամենը՝ անկանոն հաջորդականությամբ): Այս դեպքում արդեն վերանում է Նաեւ տողերի միջեւ ստեղծվող ժամանակային տեղության հավասարությունը եւ իր հերթին բացառում որոշակի տեղերում հանգային-հնչյունական ազդանշանների ճիշտ ու հաջորդական գոյության հնարավորությունը: Կառուցվածքային ազատությունն իր հետ բերում է Նաեւ հանգային ազատություն: Զանի որ գրեթե բոլոր պոետներն էլ՝ եւ Վարուժանն ու Չարենցը, եւ Սեւակն ու Էմինը, եւ Կապուտիկյանն ու Դավթյանը, բաց-շղթայագերծ հորինվածքին անցնում են կանոնավոր կառուցվածքի հանգավոր ոտանավորներ գրելուց հետո, ուստի մինչեւ մաքուր անհանգ բանաստեղծության անցնելը (այս անցումը պարտադիր չէ)՝ դեռեւս իրենց կշռությամբ զգացողության մեջ պահպանում են հանգի

կապակցող, տողերը օղակող նշանակությունը: Բայց դա արդեն գործում է վերափոխված ձեւով: Բաց-շղթայագերծ հորինվածքի դեպքում հանգը դառնում է ոչ թե պարտադիր պայման, այլ լրացուցիչ, թեւեւ երկրորդական, բայց ոչ անկարելու կշռությամբ գործոն: Այս դեպքում բանաստեղծները չեն ճգնում, որպեսզի չափածո խոսքի որոշակի կայուն տեղերում անպայման հանգ ստեղծեն, այլ դրանք ստեղծվում են պատահական, անկանոն ձեւով, հեռու-հեռու: Սակայն այդ պատահական հանգերն էլ դեռեւս պահպանում են իրենց կշռությամբ նշանակությունը: Դա գիտակցելով՝ բանաստեղծներն այդ պատահական հանգերը եւս կանխամտածված օգտագործում են կշռությամբ նպատակների համար: Այսպես հանգը բաց-շղթայագերծ հորինվածքի կառուցվածքներում ստանում է տունը, խոսքի որեւէ հատվածը կամ ամբողջական գործը կապակցելու, ամփոփելու, Նաեւ կառուցելու նշանակություն: Եվ նույնիսկ չափածո խոսքի կա-

ռուցվածքային այս տեսակի սահմաններում պատահական հանգ հասկացության օգտագործումը գուցեւ ճիշտ չէ, քանի որ այդ պատահականությունները երբեմն ունեն գիտակցված ու կանխամտածված բնույթ, ինչն էլ դրդում է խորհելու արդեն այդ պատահականությունների օրինաչափության մասին: Իսկ օրինաչափության ուրվագծեր իրոք որ կան, եւ դրա հիման վրա, ամփոփելով չափածո խոսքի այսպիսի կառուցվածքի շրջանակներում հանգի առանձնահատկությունների հարցը, կարելի է ներկայացնել բաց-շղթայագերծ բանաստեղծության մեջ հանգի ունեցած դերի ու նշանակության ընդհանուր պատկերը: Նման դեպքերում, դադարելով կրել կանոնավոր համաչափ կառուցվածքի մեջ ունեցած իր նշանակությունը, հանգը ներկայանում է վերափոխված ձեւով, դառնում կշռությի լրացուցիչ գործոն եւ ստանում ոչ թե ամեն տող ու տուն կապակցելու, տողերի, տների չափական ավարտն ազդարարելու, այլ անկանոն դրսևորմամբ որեւէ հատված միավորելու, դրանով իսկ տաղաչափական այլ տարրերի հետ մեկտեղ խոսքի կշռության ընդհանուր ձեւով կազմակերպելու դեր: Եթե կանոնավոր կառուցվածքի դեպքում հանգավորվում է ամեն մի տող, ապա այս տեսակն ընդհանուր նկարագրով ավելի մոտ է անհանգ բանաստեղծությանը, բայցեւ տեղ-տեղ ունի հանգային, հնչյունական կապեր, ինչը կատարում է որոշակի դեր եւ դրանով իսկ ստանում հանգային նոր ու յուրահատուկ դրսևորում: Այս կառուցվածքը հաղթահարում է հանգային մտածողությունը, վերանում է հանգի շրջափակող գերությունը, եւ չափածո խոսքը պահպանում է ասելիքի բնական վերաբարտարման ավելի նպաստավոր, ազատ սահմաններ:

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ թիվ 2

Խավարի պատկերները նմանապես ձեւավորում են Հարություն Բոնդի այն բանաստեղծությունները, որոնք նվիրված են ամերիկյան բնապատկերներին: Խոսքը մասնավորապես «Ինչպես է դա պատահում քեզ հետ» բանաստեղծական շարքի մասին է: Բոնդի այս երկերում ամերիկյան բնավորությունն ու խոսքը զավեշտի առարկա են դառնում:

Հարություն Բոնդի (Բոնդյուֆյանը) Եւ Մրա Դոնեգիան

«Փողոցային քարոզչի աղոթքը» գրվածքում գործող անձի ազդեցիկ ու կրակոտ քարոզը չափազանց աղմկոտ է (32-34): Վերը նշված շարքին պատկանող մեկ այլ ուշագրավ երկ է «Կատարելապաշտը» գրվածքը: Հերոսի խոսքի շարադասությունը չափազանց ճշգրիտ է ու չոր եւ հաճախ՝ իմաստագուր: Բոնդի այս երկի գործող անձն ընթերցողներին ջանում է համոզել լինել Էկլեկտիկ (48): Այս շարքի այլ ուշագրավ գործերից են «Ձեռնոցը» եւ «Ոսկյա ատամը»: Վերջինիս մեջ ասվում է այն մասին, թե ինչպես է բանաստեղծն ավտոմեքենայով հետեւում Նյու Փորթի աստղ Սոնի Սթիթին: Վերջինիս հետեւելու ընթացքում արվեստագետը կարողանում է որսալ «իսկական ոսկու փայլը»:

Նյու Փորթի գիշերն այդ մթին
Պատկանում էր Չարլի Փարքերին:
Խորհում էի ես՝ ինչո՞ւ եմ նրանք
Կոչում Սոնիին տարիներ շարունակ
Չարլի Փարքերի Սոնի անճարակ:
Նյու Փորթ քաղաքում անճարակ Սոնին
Հրաժեշտ էր տվել իր երկար թեւերին:
Անճարակ Սոնին նման էր հողմի:

Գիշերով մթին
Հնչյունը լսվեց պղնձյա գործիքի,
Որի փայլը նման էր ոսկյա ատամի:
(Տե՛ս The Way It Happens to You, էջ 20-21):

Հարություն Բոնդի բանաստեղծական տողերը «առաջ են շարժվում առկայծման պես», իսկ դրա հերոսը՝ Սոնին, կարծես սեւ, ուժգին հողմ լինի: Նրա ոսկյա ատամները հանդիսանում են լույսի, լիաթոք ծիծաղի եւ կայունության խորհրդանշաններ: Բոնդի ուշագրավ այլ երկերից է «Մեր հայրերի որդիները» բանաստեղծությունը: Վերջինիս հերոսը Նոր Անգլիայի երաշտի ամայության մեջ մի կանխորոշված եւ բարենպաստ ուժ է տեսնում: Բանաստեղծը մի տարօրինակ գաղափար է արտահայտում, ըստ որի՝ միայն երաշտն է ի գործու արգասաբերություն բերելու այդ բնակավայրին, ուր «ջուրն ամեն օր նվազում է»: Նա, ըստ երեւույթին, նկատի ունի այն, որ յուրաքանչյուր երաշտի շրջանին անխուսափելիորեն հաջորդում է բնության զարթոնքի եւ արգասաբերության շրջանը:

Որդիները մեր հայրերի
Տեղ են գտել հանգրվանի
Մեկ այլ կողմում այս հովտի՝
Թաղամասում անճոռնի:
Շատ ժամանակ չի անցնի,
Կգա պահը վերադարձի
Դեպի դաշտը սերմնացանի:
(Տե՛ս The Northern Wall, էջ 27):

Հարություն Բոնդի այս եւ այլ բանաստեղծություններում մարդ արարածի հարատեւելու կամքը, առկա հնարավորությունը ձեռքից բաց չթողնելու նրա ունակությունը, հավասարակշռում են այն համոզմունքը, համաձայն որի՝ չտեսնված ուժերը ներդաշնանակություն են խոստանում մեծ հեռանկարում: Եթե նույնիսկ բանաստեղծը մտադիր է մնալ լռակյաց, միեւնույն է, դա դեռ անգործության նշան չէ: Ճիշտ այնպես, ինչպես հայոց պատմության երեք հազար տարին հուշում են ինքնաաքսորի վերածնող գործության մասին, այս գայլային ժամանակներում գառան դեր խաղալու մասին. այստեղ նույնպես ամերիկահայ պոետը հայտնաբերում է մի առանձին տեղ, որտեղ մարդկային ոգին կարող է ծաղկունք ապրել: Որդիները հնարավորություն կստանան վերադառնալու իրենց հարազատ դաշտերը եւ սերմեր ցանելու: Նրանք կարծես ազգային ավանդույթների պաշտպաններ լինեն, որոնց համար խղճնդոտ չեն հանդիսանա պատմության հասցրած վերքերը:

Հարություն Բոնդի ստեղծագործական ռազմավարության մեկ այլ պատառիկ սկիզբ է առնում առեղծվածային գրավորությունից, մի գիտակցումից, ըստ որի՝ անտեսանելի, սեւ ուժերը, որոնք դուրս են վերահսկողությունից, գտնվում են շարժման մեջ եւ որոշակի ձեւ են հաղորդում մեր կյանքին:


Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ 2015-ի թիվ 22-24
եւ 2016-ի թիվ 1-3

Ս. Երեմյանի կարծիքով՝ Պտղոմեոսի հիշատակած Բուանա քաղաքը համապատասխանում է Վանին, եւ, ըստ Եուբյան, «Վան» ձեւի առաջին հիշատակությունն է հանդիսանում: Սակայն, նրա կարծիքով, Պտղոմեոսը Վանը հիշատակում է նաեւ որպէս Թոսպիա: Մեր կարծիքով՝ Թոսպիայի պարագայում կարող ենք գործ ունենալ ոչ թե Վանի, այլ Ոստան անվանի հետ, այլապէս անբացատրելի է աշխարհագրական տարբեր կողորդիւնատներով առանձին Թոսպիա եւ Բուանա քաղաքների հիշատակությունը, ընդ որում՝

ձեւով: Նման պարագայում նա համապատասխանեցնում է Կորտայան աշխարհագրության Կորճայքի անվանը՝ տեղադրելով Կորտայան Տնորիքի, այսինքն՝ աշխարհագրության Կորճայքի կենտրոնական եւ արեւելյան հատվածներում:

Այսպիսով՝ Պտղոմեոսի հիշատակած Անգիտենե, Թոսպիոս եւ Կորտայա աշխարհները համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի Աղծնիք, Մոկք, Վաս-



Աշխարհի փառեզը՝ ըստ Պտղոմեոսի (ըստ Յոհաննես Հնիցերի 1482 թ. հրատարակության)

դրանց միջեւ եղած հեռավորությունը գրեթե համապատասխանում է Ոստանի եւ Վանի միջեւ եղած հեռավորությանը:

Ս. Երեմյանի կարծիքով՝ Պտղոմեոսի հիշատակած Կոլխիս (Կողքիս) վայրը համապատասխանում է Վասպուրականի Կոլխիսանովիտ գավառին:

Պտղոմեոսի հիշատակած մեկ այլ բնակավայր՝ Արտեմիդա քաղաքը, Ս. Երեմյանի կարծիքով, համապատասխանում է ուրարտական Արուբանա սրբավայրին եւ Մովսէս Խորենացու հիշատակած Արեբանոս քաղաքին, իսկ գուցէ Արուբանինի աստվածուհու պաշտամունքին փոխարինել է Անահիտի պաշտամունքը, եւ քաղաքը կոչվել է նաեւ Արտեմիդա: Այն, ըստ «Յայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հեղինակների, ամենայն հավանականությամբ համապատասխանում է Յայոց ձորի Արտամետին:

գ) Կորինայա: Պտղոմեոսը Թոսպիոս աշխարհից հարավ հիշատակում է Կորինայա: Բ. Յարությունյանը, հաշվի առնելով այն փաստը, որ Պտղոմեոսի հիշատակած Կորինայան մեզ հասած ձեռագրերում հանդիպում է նաեւ Կորյանա, Կորինա, Կորեանա, Կորիոս եւ Կորինեա տարբերակներով, առաջարկում է աշխարհի անվանումը կարդալ «Կոր(տ)այա»

պուրական (առանց արեւելյան կեսի՝ Մարդպետականի) եւ Կորճայք (կենտրոնական եւ արեւելյան հատվածները) աշխարհների գրադեցրած տարածքներին:

Պտղոմեոսը Մեծ Յայքի աշխարհների չորրորդ շարքը ներկայացնում է հետեւյալ կերպ. «Տիգրիս գետի ակունքից արեւելք՝ Բագրավանդենե, նրանից ներքեւ՝ Գորդյու(ե)նե, որից արեւելք՝ Կոտայա, եւ նրանից ներքեւ՝ մարդերը»:

ա) Բագրավանդենե: Պտղոմեոսի հիշատակած Բագրավանդենե աշխարհն զբաղեցնում էր Արածանու ամբողջ վերին ավազանը, սակայն Պտղոմեոսը հիշատակում է, փաստորեն, Գորդյուենեի հարեւանությամբ: Բանն այն է, որ Մեծ Յայքում Նպատ կամ Նպատական անունով լեռներ հանդիպում են երկու վայրում՝ Բագրեւանդում՝ Զիրավի դաշտի մոտ, եւ Յարավային Յայաստանում: Ինչպէս ցույց է տվել Յ. Մարքվարտը, հունա-հռոմեական հեղինակները (Երատոսթենես, Ստրաբոն, Պլուտարքոս) քաջածանոթ էին միայն Յարավային Յայաստանի Նպատական-Նիֆատես լեռներին: Նման պարագայում Բ. Յարությունյանը կարծում է, որ Պտղոմեոսը տեղյակ է եղել, որ Նպատ լեռը գտնվում է Բագրեւանդում, սակայն իմացել է միայն Յարավային Յայաստանի Նպատական լեռների գոյությունը,

ուստի Բագրեւանդը տեղադրել է Նպատին սահմանակից Կորդյուեի հարեւանությամբ:

Բագրավանդենեի կազմում է եղել ոչ միայն աշխարհագրության Այրարատի հարավային Բագրեւանդ գավառը, այլ նաեւ Կոգովիտ եւ Ծաղկոտն գավառները՝ հաշվի առնելով նրանց ֆիզիկաաշխարհագրական եւ տնտեսական սերտ ընդհանրությունը:

Յետաքրքրական է Պտղոմեոսի հիշատակած Սագավանա բնակավայրի տեղադրության խնդիրը: Սագավանան Յ. Մարկվարտը եւ Ն. Ադոնցը նույնացրել են Բագավանի հետ՝ ներկայացնելով Սագավանա տեղանունը՝ որպէս Բագավան... Բագաունա... Սագավանա աստիճանական աղճատման արդյունք: Բ. Յարությունյանը եւս Բագավանի տեղում է տեղադրում Պտղոմեոսի հիշատակած Սագավանա բնակավայրը:

բ) Գորդյուենե: Գորդյուենեն, ըստ Բ. Յարությունյանի, նույն Կորդյուենե է, որը պտղոմեոսյան ժամանակ առանձին աշխարհ է կազմել:

Բ. Յարությունյանն առանց վարանելու Կորդյուեի կազմում է ընդգրկում ոչ միայն Կորդյուե գավառը, այլ նաեւ Նախկին Կորդվաց թագավորության այն հատվածը, որը տարածվում էր Տիգրիս գետի աջափնյակում եւ 5-րդ դ. հայ մատենագիրներին ծանոթ է Ծավոնք անունով: Այլ կերպ ասած՝ Գորդյուենե համապատասխանել է Կորդվաց Նախկին թագավորության հիմնական տարածքին՝ Արեւելյան Տիգրիսի (Ջերմ) ստորին ավազանին՝ մինչեւ բուն Տիգրիս: Այս եզրահանգումն ամբողջությամբ տեղավորվում է Մեծ Յայքի՝ Պտղոմեոսի Նկարագած հարավային սահմանների համատեքստում:

գ) Կոտայա: Գորդյուենեից արեւելք տարածվել է Կորտայա աշխարհը: Ն. Ադոնցը Կոտայան նույնացրել է Կոտայքի հետ: Բ. Յարությունյանի կարծիքով՝ Ն. Ադոնցին շփոթեցրել է այն հանգամանքը, որ Կոտայայի հարեւանությամբ Պտղոմեոսը հիշատակում է Բագրավանդենեն, եւ մեծանուն հայագետը կարծել է, թե գործ ունի Կոտայքի հետ: Իրականում, ինչպէս արդեն նշել ենք, գործ ունենք Բագրավանդենեի դիրքի սխալ տեղադրման խնդրի հետ:

Բ. Յարությունյանը հետաքրքիր լուծումներ է առաջարկել՝ Պտղոմեոսի հիշատակած Կորինայա եւ Կոտայա աշխարհների տարբերակման խնդրի հետ կապված: Նա Պտղոմեոսի հիշատակած Կոտայան, ի վերջո, տեղադրում է Պարսկահայքի տեղում՝ հաշվի առնելով Պտղոմեոսի՝ աշխարհի հիշատակումը Մարդոյ, այսինքն՝ Մարդպետական աշխարհի հարեւանությամբ, եւ Գորդյուենեից (Կորդյուեից) արեւելք: Նա իր եզրահանգումը հիմնավորում է


նաեւ այն փաստով, որ Փավստոս Բուզանդին Պարսկահայք աշխարհը հայտնի է նաեւ Կորճեից գավառ անունով, քանի որ պատմիչն այդ գավառում է հիշատակում աշխարհագրության Պարսկահայքի Չարեհավան գավառի սահմաններում գտնվող Սաղամասը՝ հետագա Սալմաստը, ինչպէս նաեւ նրանից հետո՝ դեպի հյուսիս, Նկարագրում է պատմական անցքեր, որոնք տեղ են գտել Բագրեւանդ եւ Կոգ (իմա՝ Կոգովիտ) գավառներում:

Բ. Յարությունյանը գտնում է, որ Գորդյուենեից արեւելք հիշատակվող Կոտայան Պարսկահայքն է՝ նաեւ հիմք ընդունելով Պտղոմեոսի ձեռագրերից մեկում «Կորտայա» ընթերցումը՝ որպէս առավել ճիշտ Նախնական ձեւ: Նման պայ-

րը, Վասպուրական (առանց արեւմտյան կեսի՝ Ռշտունիքի), Կորճայք (արեւմտյան հատվածը) եւ Պարսկահայք աշխարհների գրադեցրած տարածքներին:

Մեծ Յայքի թագավորության սահմանները: Ուշագրավ է, որ Պտղոմեոսը ջանում է մանրամասն նշել Մեծ Յայքի սահմանները: Ստորեւ մեջբերում ենք նրա երկի՝ Մեծ Յայքի սահմանները ներկայացնող հատվածը. «Մեծ Յայքը հյուսիսից սահմանակից է Կողքիսի (իմա՝ Եգերաց աշխարհի - Ս. Մ.) մի մասին, Իբերիային, Աղվանքին՝ Կյուրոս (իմա՝ Կուր - Ս. Մ.) գետով անցնող գծով:

Արեւմուտքից՝ Կապարովկիային, Եփրատ գետի մի մասի գծած գծով, եւ Կապարովկիական Պոնտոսի այն մասով, որ հասնում է



«Ասիայի երրորդ փառեզը՝ ըստ Պտղոմեոսի»

մաններում նա գտնում է, որ աշխարհագրության Պարսկահայքի Կուռնիճան գավառը պահպանել է աշխարհի Նախնական՝ Կորճեք անվան վերհուշը:

Յետաքրքրական է, որ Պտղոմեոսի հիշատակած Կապուտա բնակավայրը Բ. Յարությունյանը համապատասխանեցրել է Ուրմիո լճի Արքայից կղզում գտնվող Կապուտան բնակավայրին:

դ) Մարդեք: Պտղոմեոսի հիշատակած Մարդեքի (Մարդոյ, Մարդպետական) աշխարհը, ըստ Բ. Յարությունյանի, համապատասխանում է Վասպուրականի արեւելյան կեսին, որտեղ գտնվել են արքայական կավածքները, որոնք հսկող վերակացուներն էլ մարդպետ էին կոչվում: Վերջիններիս գործառնությունը 5-րդ դ. գտնվում էին Արծրունիների ձեռքում:

Այսպիսով՝ Պտղոմեոսի հիշատակած Բագրավանդենե, Գորդյուենե, Կոտայա եւ Մարդեք աշխարհները համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի Այրարատ (միայն Բագրեւանդ եւ հավանաբար Ծաղկոտն գավառներ-

մինչեւ Կողքիս՝ Մոսքական լեռների գծած գծով:

Արեւելքից՝ Զիրկանյան (իմա՝ Կասպից - Ս. Մ.) ծովի այն մասին, որը Կյուրոս գետի գետաբերանից հասնում է մինչեւ 79°45' եւ 43°20' չափումներն ունեցող սահմանը (որի եւ Կյուրոս գետի գետաբերանի միջեւ գտնվում է նաեւ Արաքս գետի գետաբերանը՝ 79°45' եւ 43°50'), եւ Մարաստանին՝ այդտեղից դեպի Կասպիոս լեռը (իմա՝ Կասպիական լեռները - Ս. Մ.) ձգվող գծով, որի ծայրերն ունեն 79° 42'30' եւ 80°30', 39°40' չափումները:

Յարավից Մեծ Յայքը (սահմանակից է) Սիջագետքին՝ Տավրոսի գծած գծով, որը հասնում է Եփրատ գետին այն տեղում, որի չափումներն են 71°30' եւ 38', եւ Տիգրիս գետին՝ 75°30' եւ 38°30' չափումներն ունեցող վայրում, եւ Ասորեստանին՝ Նիփատես լեռան վրայով անցնող գծով, գրեթե ուղիղ մինչեւ Կասպիոս լեռան նշված սահմանը՝ այն գծով, որ ձգվում է Նիփատես լեռը»:

Շարունակելի
Միջալել ՄԱԼԿԱՍՅԱՆ

Սկիզբը՝ էջ 5

Դա կատարվում է հանգային կայուն ազդանշանների վերացման եւ այդ ազդանշանների պարբերական վերադարձի սպասման հաղթահարումով, որովհետեւ այդ սպասումները ենթագիտակցության մեջ գծում են կշռության շարժման պատրաստի որելե հաճախականություն, ստեղծում ուժեղ ձգողականություն ունեցող տաղաչափական տարրերի յուրահատուկ դաշտ եւ խոսքի ընթացքը պահում իրենց շրջագծի մեջ:

Հանգի դրսեւորման այս առանձնահատկության հետ մեկտեղ, բաց-շղթայագերծ հորինվածքի սահմաններում արմատավորվում է նաեւ անհանգ, այսպէս կոչված,

սպիտակ ոտանավորը, ինչն զգալի կիրառություն ունի Սեւակի «Եղիցի լույս» գրքում: Անհանգ ոտանավորը գերադասում են նաեւ խորերը:

Սեւակի ու սերնդակիցներից մի քանիսի անհանգ ոտանավորը շատ դեպքերում դեռեւս լրիվ անհանգ չէ. որտեղից որտեղ, ամբողջ մի մեծ հատվածում, մեկ-երկու հնչյունական նմանություններ գտնում են իրար, կապակցվում՝ աղոտ ու թույլ կերպով նպաստելով հանգաստեղծմանը: Երբեմն լինում է այնպէս, որ մի մասը լինում է անհանգ, իսկ մյուս մասերում նկատվում են

ՀԱՄԱԳԻ

դարձյալ թույլ հանգակապեր: Նման դեպքերում հանգակցվող բառերի հնչյունական նմանությունները մեծ մասամբ լինում են մոտավոր եւ ուշադրություն չգրավող: Բայց ճիշտ ընթերցման դեպքում այդ մոտավոր նմանություններն անգամ դառնում են զգալի: Հնչյունական նմանություններ ստեղծվում են նաեւ որոշ բառաձեւերի եւ արտահայտությունների կրկնությամբ: Անհանգության տեսանկյունից դրանք ունեն թույլ ու աննշան հանգավորում, իսկ ավանդական հանգավորման հայեցակետով՝ միանգամայն անհանգ են: Այդ մի-

ջանկյալ օղակի մասին արդեն խոսվեց, դրանից դուրս անհրաժեշտություն է նաեւ խոսքի զարգացման միտումի ճշտումը, որն այս դեպքում վերջնականապէս հանգում է անհանգ ոտանավորի: Ահա եւս մեկ օրինակ՝ Սեւակի «Աստծու քարտուղարը».

Ձորակն ասես լինի մի նեղ
թանաքաման,
Ու նրա մեջ շեղ տնկված է հին ջրվեժը՝
Այնպէս նման փղոսկրե գրչակոթի:
Կողքին մի դաշտ քառակուսի եւ
գույնզգույն,

Ասես մի մեծ նամականիշ, որ կնքված է
Դեմի լեռան մեծ դրոշմով:

Շարունակությունը՝ էջ 7



Սկիզբը՝ թիվ 3

«Քոչուրներին» համար արհամարհված եւ օտար լինելը դարձել էր սովորական մի բան։ Այս զգացումն էլ ճնշում է իր վիճակի մեջ ինչ-որ բան փոխելու ձգտումը։ Նրանք լուռ կրում են իրենց ցավերը, մինչեւ որ ի հայտ է գալիս կինը, որից էլ սկիզբ է առնում հոգեկան դրաման։ Ահա այս էակի համար ընդունակ է ըմբոստանալու «քոչուրի» խեղճ հոգին։ Խոնարհներն ընդունա՞լ են առհասարակ որեւէ նախաձեռնության, համարձակ քայլերի։ Օշականը պատասխանում է այս հարցին. «Ընդունակ են, կնոջ համար ամենէն անկարելի, յիմարական յանդգնութիւնը գործադրելու, հերիք է, որ ուզուի իրենցմէ» (Յ. Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, հ. 10, 1982, էջ 111)։ Պատասխան ունի նաեւ Երուխանը. «Հազար պան ըսե՛ ամենն ալ ընեմ» («Ձուկին փոխարեն»)։ Իրենց անուրախ հոգով նրանք ուրախություն են պատճառում մարդկանց։ Ու թեւէ մարդկանց ուրախություն պատճառելն սկզբնապէս ապրուստ հայթայթելու միջոց է, հետագայում այն դառնում է սիրած աղջկա ուշադրությանն արժանանալու հնարավորություն («Կուզը», «Պաղտո»)։ Հետո աստիճանաբար ուրախությունը տեղի է տալիս տխրությանը, երբ պատանիների սրտում բույն է դնում սերը, որի պատասխանը լինում է արհամարհանք կամ սառը վերաբերմունքը, որի պատճառով նրանք դառնում են «բախտին մեկ անգուր ապտակի», կամակորոթյան, «սրտի ցավի» զոհեր։ Աղջկա մերժումից սարսափահար է լինում նաեւ մեկ այլ հերոս՝ Համբիկը, բայց նա ուժ է գտնում իր մեջ՝ ապրելու, դիմանալու, «գորշությանը հաղթելու» («Ձուկին փոխարեն»)։ Նման հերոսների դժբախտությունը կարծես կրկնապատկվում է՝ սիրած կնոջ դժբախտ վիճակը հաս-

«Փոքր սպիտակ» ԴՐՎԱՆ ԵՐՈՒՄԱՆԻ ԵՎ ՆՎԱՐԴ ՕՇԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

կանալով. ամուսնու կողմից արհամարհված ու լքված էր այն կինը, որին «անանկ սրտագեղ անձնվիրությամբ» էր նվիրված ինքը։ Անձնագոհության է գնում նաեւ Ալիքսանը («Հյուժախտավորը»)՝ մոռանալով վտանգավորությունը, զգուշությունը, միայն թէ փրկի սիրած էակին։ Աննիկին բժշկելու, նրա համար սնունդ ձեռք բերելու համար երիտասարդը գողանում է որսորդների ուռնակները, որի պատճառով ձերբակալվում է։ Այլեւս խայտառակված, սիրածին կորցրած տղայի միակ փրկությունը մահն էր. նա ինքնասպան է լինում։ Հույսը տակավին չկորցրած՝ Պաղտոն դառնում է սառնասիրտ աղջկա կամակորոթյան զոհը։

Երկու գրողներն էլ ունեն պատմվածքներ («Կուզը», «Քարիտեզճին», «Ձուկին փոխարեն», «Թաշկինակը», «Պաղտո»), որոնցում առավել է ընդգծվում հասարակության շերտավորումը։ Աղքատ լինելով՝ տղաները մեծ երազներ են կապում ունեւոր ընտանիքների աղջիկների հետ։ Այդ հերոսները սիրում էին ոչ թէ նրա համար, որ աղջիկը հարուստ էր կամ աղքատ, այլ պարզապէս սիրում էին։ Եվ այդ քայլն արդարացված էր։ Դա ոչ թէ սեփական սոցիալական պատկանելությունը մոռացած հանդուգն տղաների քայլ էր, այլ ուներ իր արդարացումները։ Նրանց այդպէս կարծելու հնարավորություն տալիս էին աղջիկները։

Յուրաքանչյուր գեղարվեստական պատկեր կամ հոգեբանական երեւոյթ Երուխանն ու Օշականն արտացոլել են իրենց բնորոշ եղանակով։ Իրենց հերոսների հոգեվիճակը ներկայացնելու համար նրանք ընտրում են խոսքն անուղակիորեն ասելու եղանակը։ Ասվածի վկայությունն են հետեւյալ օրինակները։ Օշականի դիտումով՝ «կպտապսխաներ նորեն, բայց ձայնը կողողար հող ու խոնավ հազ մը կուզար կապելու իր բառերուն ճամբան»... Հեղինակի այն հարցի պատասխանը, թէ ինչու է Տոգսանը թախծում, լինում է հետեւյալը. «Ու արցունքը այս անգամ՝ ամբողջ վիշտ ու հուսահատություն՝ ծանր-ծանր կիյնար անոր երեսներուն վրա, դադելով կիշնար վար, մորուքին ճերմակին մեջ արծաթնալու» («Տոգսանը»)։ Երուխանի դիտումով՝ բուրձի զոհն էր անգործության նշան էին երիտասարդ նավավարի արցունքները. «Ետ դարձավ Հուսեփ ու ձեռքը աչքին տարավ՝ տեսնելու համար թէ՛ արդյոք կուլա՞ր. ո՛չ, որովհետեւ, արցունքները փոխանակ աչքեն դուրս իյնալու, հրաշքէ գնդակներու պէս սրտին մեջ վազած էին, արյունոտ

ծակեր բանալով հոն...» («Հուսահատի մը նկարագիրը»)։

Իրենց թշվառ վիճակի գիտակցությունը փորձում էին շրջանցել ե՛ւ Երուխանի, ե՛ւ Օշականի հերոսները։ Իր թերությունը եւ դրա պատճառով երկար տարիներ «հարածուն դառնություն մը» զգալով՝ Կուսիկը («Կուզը»), այնուամենայնիվ, ուժ է գտնում իրեն համոզելու, «թէ ինքն ալ ամեն մարդերու պէս եթէ ոչ վայելուչ, գեթ ոչ շատ տգեղ մարդ մըն էր», եւ կուզն ավելի վայելչություն, քան տգեղություն էր հարդրում իր հասակին։

Երուխանը հասարակությունից առանձնացնում է ֆիզիկական շեղում ունեցող անհատների, քննում նրանց վարքը եւ հանգում այն մտքին, որ նրանց վարքագիծը եւ անսպասելի քայլերը կարող են պայմանավորվել հենց այդ շեղումով։ Այս առումով հատկանշական է «Կուզը» պատմվածքը։ Արհամարհական վերաբերմունքը, ինչպէս շառաչուն ապաւոյն, ցնցում է տղային։ Աղջկա «Ա՛ս ինչ է» արտահայտությունը եւ «մեծաժխտը քրքիջ մը» արձակելը «Էլեկտրական թանձր հոսանուտի մը» նման բացահայտում են երկար տարիներ այնքան խնամքով թաքցրածը (եթէ կարելի է ահռելի կուզը թաքցնել), հիշեցնում, որ ինքը տարբերվում է մյուս մարդկանցից։ Հարվածը խաթարում է Կուսիկի հոգին այնպէս, ինչպէս ինքը՝ հայելին, որի մեջ նայելով՝ դուրս էր պոռթկում ահռելի ու անդամալուծի վիշտը, որ «վիշտերուն սաստկագույնն ու է՛ն ավերիչն էր»։ Կուսիկը «անհետ ընելու հույսի գերագույն ճիգով մը», անհուն կսկիծով փորձում է ճգմել, վերացնել «դժոխային այդ ուռնուքը», այդ «վիշտը» եւ մեռնում է ոչ թէ իր իսկ ձեռքերով բացած վերքից, այլ՝ սրտի ցավից։

Կյանքում հուսահատությունը կարող է պատել յուրաքանչյուրին։ Բայց գրողների վերաբերմունքը տարբեր է «հուսահատի մը նկարագիր» ունեցող հերոսների կատմամբ։ Օշականն այդ վիճակից հանում է իր պայքարող հերոսներին (բացառությամբ՝ Գուլոյի)։ Նրանք պայքարում են, քանի դեռ կյանք կա նրանց մեջ։ Ճիշտ է՝ նրանցից ոմանք դառնում են փառասեր մոր սիրո գերին («Առաջին արցունքը»), ոմանք զոհ են գնում սնահավատությանը («Խենթ Սողմեն»), «Հորքուր Վարդան»), ոմանք՝ ստին ու կեղծիքին («Աղբարիկը», «Մաղաքը», «Վաթմանը»), ոմանք չանսալով մոր պատգամին («Տոպիճը», «Թուրք-մեկին աղջիկը»)՝ պայքարում են։ Օրինակ՝ Վարդանը («Հորքուր Վարդան»), որի

կյանքն անցել է վանքի պատերի ներսում, ի վերջո կարողանում է ըմբոստանալ եկեղեցու կանոնների եւ գյուղի ավանդության դեմ՝ վերադառնալով իր հին «արիեստին»՝ հովվությանը։ Պատանի Պաղտոն («Պաղտո»), տանջվելով անորոշության զգացումից, ճիշտ է, դառնում է սառնասիրտ աղջկա կամակորոթյան զոհը, բայց մինչեւ իր կյանքի վերջը չի հուսահատվում։ Իրեն տաշելի պէս կյանքի ալեկոծությանն է հանձնում նաեւ Տոգսանը, բայց կին եւ ընտանիք ունենալու զաղափարն ուժ է տալիս նրան եւ տասը տարի շարունակ մեծ ոգեւորությամբ աշխատում է օրնիքուն՝ անիծելով աշխարհքն ու Աստծուն, բայց՝ «անկյութ հաճույքներուն ժպիտը» դեմքին։

Կյանքի բազում ընդգրկումներից զատ՝ որբերի կյանքն է պատկերվում մի շարք պատմվածքներում։ Երուխանի եւ Օշականի որբերն իրենց հոգեբանությամբ նման են միմյանց։ Ոմանք խեղճ են, ոմանք՝ ավելի համարձակ։ Նրանք իրենց կյանքն անցկացրել էին՝ «գիշերները հազիվ պառկելու տեղ մը գտնելով ու ցերեկին ալ հազիվ կտոր մը հաց» հայթայթելով («Ձուկին փոխարեն», «Տոգսանը», «Պաղտո»)։ Եվ «Ռոմիկետեւ երջանկության եւ հեշտակեցության վրա (որբը - Մ. Ղ.) զաղափար չունեւ, իր հիմնկական վարած կյանքը աշխարհի երջանկագույն կյանքը կկարծէր»։ Ծանր կյանքը նրանց մեջ չի սպանել ապրելու տենչը, այլ կոփել է կամքը։ Նրանցից ոմանք նպատակասլաց են եւ ապագայում «ավելի շահաբեր» գործով զբաղվելու մղումով՝ գումար են տնտեսում («Ձուկին փոխարեն», «Կուզը»)։

Մանկության տարիներին, երբ «գեղին մեջ ազդիկները հացի ատեն բարեկամ կ'ըլլան իրարու», աղքատ որբուկը չի զգում իր եւ մյուս երեխաների տարբերությունը։ Բայց երբ արդեն տարիները հաջորդում են մեկը մյուսին, եւ տարբերությունն ակնհայտ է դառնում, ծայր է առնում ցավը, որից ծնվում է խեղճությունը, հետո՝ վախկոտությունը։ Այս ամենին գումարվում է ֆիզիկական որեւէ արատ եւ բերում հուսահատության։ Հուսահատությունն ստիպում է աշխարհում որոնել որեւէ հենարան։ Խոնարհների հոգու հենարանը երազն էր՝ կինը։ Նույնիսկ երագի պահերին տրվելիս նրանց էլի նեցուկ էր հարկավոր, թեկուզ ֆիզիկական. մեկը հեկվում էր փետատին («Տոգսանը»), մյուսը՝ սյանը («Համարը»)։ Որբերին բնորոշ հատկանիշ է սա՝ կյանքում անընդհատ փնտրել որեւէ հենարան։

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 6

Անհանգ բանաստեղծության առկայությունը, եթե նկատի ունենանք վերջին շրջանի հանգաբանությունը՝ կապված բացշրթայագերծ կառուցվածքի հետ, միանգամայն օրինաչափ է։ Մտածողության՝ ամեն տեսակի կայուն ու հաստատված օրենքներից, ձեւական պայմանականությունների աքցանից ազատագրումը հեղաշրջում է այս ասպարեզը՝ նպաստելով չափածո խոսքի բնական արտահայտչականության ուժեղացմանը։ Տաղաչափական այս առանձնահատկությունները պատահական շեղում չեն, դրանք իրենց ամուր հիմքերն ունեն 20-րդ դարի հայկական պոեզիայի այն ուղղության մեջ, որը խորհրդանշվում է Յարճանյանի, Վարուժանի եւ Չարենցի անուններով։ Յարճանյանն սկզբից եւեթ հարցերը լուծեց հանգի ու չափի հետ եւ անցավ անհանգ ու ազատ բանաստեղծության՝ ազատաչափի։ Վարուժանը տատանումների մեջ էր. նա թեեւ ունի բազմաթիվ անհանգ բանաստեղծություններ (որոնց թվում նաեւ «Արմենուհի» պոեմի նախնական տարբերակը, որ Արշակ Չոպանյանի խորհրդով դարձրեց հանգավոր), այնուամենայնիվ իշխողը հանգավոր պոեզիան է, բայցեւայնակ, նա միշտ էլ ձգտել է ազատվել այդ, իր խոսքերով ասած, «բանապետությունից»։ Բոլոր դեպքերում Վարուժանի հանգը չունի այն երգեցիկ-մեղեդային

նշանակությունը, ինչ Մեծարենցի եւ Տերյանի։ Վարուժանի որոնումները հասան մկանուտ, պիրկ, կարծր ու չոր հանգաբանության՝ երբեք էլ բանաստեղծության հորինվածքում առաջնություն չտալով դրան։

Հանգաբանության մեջ հեղաշրջիչ փոփոխություններ կատարեց Չարենցը։ Նախ 1910-ական թթ. եւ 1920-ական թթ. սկզբի լիահունչ հանգաբանությանը 1922-1925 թթ. հակադրեց հիմնականում անհանգ ոտանավորը։ «Եպիբական լուսաբաց»-ում (1930), «Գիրք ճանապարհի»-ում (1933/1934) եւ անտիպներում (1935-1937) վերականգնեց հանգաբանության ավանդույթները, եւ բազմաթիվ նոր հնարավորություններ բացահայտեց այդ բնագավառում՝ նախանշելով նոր միտումների տարբեր ուղիություններ։ Ինչպէս արդեն նշել ենք, նա հատկապէս անկրկնելի է մոտավոր առձայնության հանգի կիրառությամբ։


Ահա այս հիմքի վրա, այս ավանդույթների օրինաչափ զարգացմամբ հայ պոեզիան տաղաչափության մեջ եւ հատկապէս հանգաբանության բնագավառում հասավ հետաքրքրական արդյունքի։

Ընդհանուր նկարագրով այսպիսին է հանգի դրվածքը հայ բանաստեղծության մեջ։ Սարյանը, Շիրազը, Սահյանը այն հաջողությամբ զարգացնում են եւ պահպա-

նում հանգի խոսքակերտիչ նշանակությունն ու կշռույթային դերը, Սեւակը եւ նրա որոշ հետեւորդներ հանգը կիրարկում են վերափոխված ձեւով՝ ազատ, անկանոն կապակցումներով, իսկ նույն այդ հեղինակները եւ նրանց կրտսեր գրչակիցները հաջողությամբ փորձում են իրենց ուժերը նաեւ անհանգ ոտանավորի ասպարեզում։ Անհանգ ստեղծագործողներից ոմանք անցյալում գրել են հանգերով։ Փաստորեն՝ կանոնավոր հանգի, անկանոն կամ պատահական հանգի, անհանգ ոտանավորի հիմնական տեսակները նկատելի են գրական մեկ սերնդի շրջանակներում։

Ընդհանրացնելով նշենք, որ հանգի կիրառությունը բնավ էլ վտանգված չէ։ Հանգավոր պոեզիան պահպանում է իր տեղն ու դերը։ Միաժամանակ զարգանում ու հաստատվում է նաեւ հանգաբանության նոր ձեւ, որն արդեն այլ որակ է եւ հետեւանք է գեղարվեստական մտածողության փոփոխության։ Տարածված է նաեւ անհանգ ոտանավորը եւ ունի զարգացման հեռանկար։

Հանգի դրսեւորման բոլոր ձեւերն էլ ունեն անսպառ հնարավորություններ. օժտվածության դեպքում դրանք ստանում են թարմություն, անկրկնելիություն եւ դառնում անհատական ոճի մաս։ Նման մոտե-



ցումը բացառում է հանգավոր պոեզիայի հնացածության եւ անհանգ պոեզիայի արդիական լինելու ոչ գիտական բացատրությունը։ Հանգի դրսեւորման բոլոր ձեւերն էլ պիտանի են, եւ պոեզիան գրավիչ է նաեւ տաղաչափական ձեւերի անսպառ բազմազանությամբ։

Դավիթ ԳՍՍՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,

Սկիզբը՝ էջ 5

«Յերթանոսի մարգածելը» վերնագրված գլխավորում ու միեւնոյն ժամանակ դրամատիկ մենախոսության մեջ բանաստեղծը պատկերում է մի «անբնականորեն մեծ լեռնային ձկան», որը լրջորեն վնասում է Նոր Անգլիայում ապրող երեք ագարակատերերի:

*Տարակույս չկա, որ ունակ ես դու
Յերթելել նրան թունանյութերով
Կամ մինչեւ անգամ ի գործ ես դու
Լիճը չորացնել քո մեծ եռանդով:
Սա հանիրավի ընտրություն է մի,
Որ խելահեղ է:*

*Յուրաքանչյուր մարդ աշխարհ է եկել,
Քանզի Արարիչն այդպես է ուզել:
Տարիներ հետո կանգնած լինելով*

*նույն բլրալանջին,
Եթե հարկ լինի պիտ մտաբերես Դանիել
Վերաթերին:
Իբրեւ սպասավոր՝ վերցնում ենք մենք
չար սատանային
Եվ այս արարքով բեռ ենք մենք*

*դուում մեր իսկ ուսերին:
(Տե՛ս The Way It Happens To You, էջ 34-35):*
Մոքի Դիք կետի փոքր չափորինակի պես Յարոլդ Բոնդի պատկերած ձուկը խորհրդանշում է անվերահսկելի գերբնականը, որը մի դեպքում նեցուկ է հանդիսանում, մեկ այլ դեպքում՝ կործանում: Այդ գերբնական ուժից ձերբազատվելու ցանկացած փորձ հանգեցնում է աղետի, բանի որ դրանից ազատվել նշանակում է հողը գրկել կենարար ուժից: Ամերիկահայ բանաստեղծի կարծիքով՝ հավատացյալ մարդու համար «գերբնականը» բացահայտում է իր գրավչությունը՝ հրաշալի արգասիքներով հանդերձ:

Յարոլդ Բոնդի հաջողված գործերի շարքը կարելի է դասել նաեւ նրա «Գնչուն» բանաստեղծությունը: Վերջինիս շարահատությունն ընթերցողին կարծես զգում է ստեղծագործական ներշնչման մեջ:

*Անցնում էի ես մի օր ցերեկով
Ինչ-որ զննուի վրանի կողքով:*

*Սուտ կանչեց ինձ նա
Ծամոկած մատով,*

*Եվ խոսեց ինձ հետ իմ ապագայից,
Որ նա իմացել էր իր երազներից:*

Սփյուռքահայ բանաստեղծն ըմբռնվում է այն պահը, երբ հին ուժերն աշխատանքի արդյունքում վերածնունդ են ապրում:

*Թույլ տվեց ինձ նա,
Որ հաճույքներս մնան անխաթար:*

*Եվ երբ արհեստը դառնում էր արվեստ
Աշխատանքով ստեղծարար,*

*Ամեն բան մնում է համահավասար՝
Ներքուստ դառնալով*

*Իրականություն, արքունի կամ էլ առասպել:
(Տե՛ս The Northern Wall, էջ 21):*

«Իրականություն, արքունի կամ առասպել» - ընտրությունն այս երեքի միջեւ խարխուլ է մեր մոտեցումը կյանքի հանդեպ եւ հարատևելու մեր հնարավորություններն այն ժամանակ, երբ մենք փո-

Նարոլդ Բոնդը (Բոնդջուլյանը) ԵՒ Շրա Կոնգրես



խակերպում ենք պարզ արհեստը հավատացյալի դարմանող արվեստի: Սփյուռքահայ արվեստագետը, կյանքի կոչելով այս իմաստությունն իր «Պարելով ջրի վրա» բանաստեղծության մեջ, կյանքի անկատար պարզ վերածում է մեկ այլ առասպելի՝ հավատի վերահաստատման մոռյլ բնապատկերի ֆոնի վրա: Բանաստեղծության վերջին տներում պոետը նկարագրում է այն հիմնական ընտրությունը, որ մենք կատարում ենք:

*Յուրահատուկ մի բան եմ տեսնում
Իմ շարժ ու ձեւում եւ իմ քայլվածքում:
Քայլքս հաստատուն է տաղտակամածին
Բայց եւ նման է քայլքին հարբածի:
Կապուտակ ջուրը ինձ չի պահելու
Իր ալեկոծված մակերեսային:
Յրա՛ջբ չէ արդյոք, որ լողում եմ ես
Ծովաջրերի փրփուրի միջով՝
Թեկուզ ոչ այնքան նրբագեղ ձեւով:
Մարդիկ ասում են,
Որ ես պարում եմ ջրերի վրա՝
Չինված լինելով իմ մեծ հավատով:
Կա՛մ ես պիտ սահեմ ջրի վրայով,
Կա՛մ էլ պիտ մեռնեմ վաղաժամ մահով:
(Տե՛ս Dancing on Water, էջ 23):*

Այստեղ ապրելու կամ մեռնելու որոշումը խորհրդանշական ձեւով արտահայտված է պարելու կամ ջրահեղձ լինելու միջոցով: Այսպիսով՝ այս բանաստեղծությունը եզրափակում է այն ուղեւորությունը, որն սկսվել էր «Չողողի արհեստանոցը» գրվածքի մեջ:

Հայկական թեմային նվիրված երեք բանաստեղծությունները միավորում են վերոնշյալ թեմաները եւ մատնաշում են Բոնդի կարգախոսի էթնիկ ակունքները: Ամերիկահայ բանաստեղծի հետգրությունն սկսվում է հետեւյալ երկտողով. «Հայը պատմական երեւոյթ է: Նա պետք է վերացած լինեւր տակավին սերունդներ առաջ» (տե՛ս Bedrosian M., The Magical Pine Ring, Detroit, Wayne State University Press, 1991, էջ 185): Այնուհետեւ ամերիկահայ պոետը ներկայացնում է խմբային եւ ընտանեկան պատմության վերաբերյալ մի ցուցակ, որին տիրել էր մի թուրք: Հայ ժողովրդի անցյալի ողբերգական պարադոքսներն աստիճանաբար չքանում են, իսկ թոշնաց դեմքերով ավագ սերունդը ծերանում է, եւ նրա կենսական ուժն անցնում է երիտասարդությանը, որպեսզի վերջինս շարունակի ազգային քարոզչությամբ զբաղվել: Այդ պայքարն ու քարոզչությունն իրականացվում են ամենուրեք՝ սկսած ՄԱԿ-ի գրասենյակի մոտից մինչեւ Ֆրեդսոնի խաղողի այգիները (տե՛ս Dancing on Water, էջ 59-61): Վերջին բանաստեղծության մեջ կրկնվում են այն դիտարկումները, որ ժամանակին արել

էր Մայքլ Արլեն Կրոտերն իր «Ուղեւորություն դեպի Արարատ» ինքնակենսագրական գրքում: Խոսքն այն գաղափարի մասին է, ըստ որի՝ միակ դեղամիջոցը, որը կարող է օգնել ավագ սերունդին ձերբազատվել ցեղասպանության վրա մտասեւեռվելուց, «անհամբեր երիտասարդների» շարժումն է դեպի առաջ: Այստեղ ճիշտ այնպես, ինչպես «Մեր հայրերի որդիները» գրվածքի մեջ, ազգային մշակույթը հրաշքով փրկվում է ոչնչացումից: Դա հնարավոր է դառնում ոչ թե ուժասպառ հայ ծերունիների ընդգումների, այլ թխավարս, հանդուգն հայ երիտասարդների ջանքերի շնորհիվ:

Հարատեւման թեման նմանապես լուսաբանման առարկա է դարձել «Պատահականությունը» վերնագրված երկում, որն ընդգրկել էր մի շարք ժողովածուների մեջ: Նշված բանաստեղծության ինքնակենսագրական կորիզն իրենից ներկայացնում է գրավիչ պատմություն մի երեխայի ազգային պատկանելության անկայուն զգացողության մասին: Օտար առոգանությամբ խոսող փոքր տղայի համար միջնակարգ դպրոցի խիստ կարգ ու կանոնը նորություն էր, իսկ յուրաքանչյուր գործողություն՝ անկանխատեսելի եւ վտանգավոր:

Դասարանում առաջին

Մի տղա էի նիհար,

Խոսում էի ես շրջապատիս հետ

Հնչողությամբ, որն էր օտար:

Վախը ուժգին ինձ էր պատել

Եվ կարող էր լեղիս պատռել:

Նկարչության ուսուցչին

Կոչում էիք օրիորդ Բրին:

Ուսուցանում էր նա մեզ

Տարբեր գույներ տարբերել

Եվ թղթիկներ կտրատել

Ու հնդկական փետուրների

Նմանությամբ դասավորել:

Թղթիկները մեր կտրտած

Պիտի դարսեկնք ըստ երանգների

Ու փակցնեկնք գլխազարդերին:

Չեմ հասկանում ես իմ ուսուցչուհուն:

Միայն եմ տեսնում նրա ասածում:

Ինչո՞ւ պիտի ես կապույտը դնեմ

Դեղինի կողքին, իսկ գույնը մռայլ՝

Ճերմակի կողքին:

Դեռ ոչինչ չարած իմ ուսուցչուհին

Ինձ պիտ անվանի համր հայրորդի:

Առանց նայելու խառնում էի ես

Փետուրները այն, որ ունեի ես

Եվ այնուհետեւ կույտը փետուրի

Իմ գլխազարդին ես սոսնձեցի,

Իսկ վերջին պահին շիշը սոսնձի

Անզգուշաբար թափեցի գետնին:

Օ՛, դժբախտություն, հիմա օրիորդ Բրին

Պիտ պախարակի սխալը այդ իմ:

Սակայն նման բան այդպես էլ չեղավ,

Ուսուցչուհին իմ շուտով մոտեցավ

Ու արժանացրեց ինձ գովասանքի:

«Դու շատ լավ գիտես տեղը գույների:

Գույնը կապուտակ պիտի հաջորդի

Մանուշակագույն եւ կանաչ գույնին»:

Դասավորությունն այդ երանգների

Բավական նման է մի ծիածանի,

Ջրի մեջ նետված մի յուղաներկի:

Փետուրները մի քանի

Հաջորդում են մեկը մյուսին

Եվ ունեն տեսք անթերի:

Նկարչության ուսուցչուհին,

Ում անունն էր օրիորդ Բրին

Չարժանացրեց ինձ իր պարսավանքին

Եվ վերջ դրեց իմ սին երկյուղներին:

(Տե՛ս The Northern Wall, էջ 9):

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

«ԾՈՔԻ ՄԱՐԴՈՒ» ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒՄԱՆԻ ԵՎ ՆՎԱՌԲ ՕՇՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7

Հուսահատությունը Երուխանի հերոսներին տանում է կործանման: Նրանց մեջ մեռնում է ապրելու տենչը: Հոգեկան այս վիճակը լավ է պատկերված հատկապես «Հուսահատի մը նկարագիրը» նովելում, որի հերոսը, չդիմանալով կորստի ցավին, «այլախոս փափագ մը ունեցավ օր մը. ուզեց ամեն մեռելներու ետեւեն երթալ...»: «Կատարյալ քայքայումը» հանգեցնում է նրան, որ «գործ մը չըրավ ապրելու համար» եւ ժամանակից շուտ ծերացավ:

Օշականի «քոքուրները» բացահայտվում են նաեւ վերապրումների եւ հուշերի միջոցով: Նրանցից շատերը («Պառապին անեծքը», «Գոլո», «Պաղտո», «Մատմագել Եվա», «Տոպիճը») իրենց անցյալին կապված են



թեւ տխուր, բայց քաղցր հիշողություններով: Այդ հիշողությունները սպեղանի են դառնում կյանքի ցուրտ ու դառը օրերին: Ի տարբերություն Օշականի՝ Երուխանն ինքն է պատմում իր հերոսների անցյալը: Բայց աղքա-

տությունն այն աստիճանի էր, որ եթե նույնիսկ բացահայտվում էր հերոսների «շնոդալից ու ցոփ» անցյալը, այդ ամենը թվում է առասպել կամ առեղծված՝ «վարպետորդիներե կամ ընդվայրացածներե հերյուրված» («Պապուկը»): Հերոսների անցյալը բացահայտելու քայլն ինքնանպատակ չէ. Երուխանը ցանկանում է ցույց տալ, թե ցավերն ու տանջանքները, հուսահատությունը եւ աղքատությունը մարդուն ինչ վիճակի կարող են հասցնել:

Ինքնատիպ է նաեւ գրողների ոճը, որի վկայությունն է նրանց պատմվածքների թեկուզեւ սկիզբը: Օշականի պատմվածքների սկիզբը կարելի է համարել բանալի, մուտք՝ հերոսի ներաշխարհը հասկանալու եւ հետագա քայլը պարզելու: Օշականը պատմվածքների սկզբում նկարագրում

է իր հերոսի արտաքինը, խոսում նրա զբաղմունքի եւ հասարակության մեջ դերի մասին, հետո քայլ առ քայլ վեր հանում նրա դրաման եւ դրա պատճառները: Նա իր «խոնարհների» հետ ընթերցողին ծանոթացնում է բնության գրկում՝ լեռ տանող արահետին, լճի մոտ, ծառուղում կամ փողոցում: Սա ինքնանպատակ չէ. այս քայլը հնարավորությունն է տալիս գրողին՝ խոսելու նախ հայրենի բնաշխարհի գեղեցկությունների, դրանց նկատմամբ ունեցած կարոտի մասին, ապա անդրադառնալու իր հիմնական նպատակին՝ հերոսների ներաշխարհի դրամայի բացահայտմանը: Նշենք մի առանձնահատկություն եւս, որով Օշականի ստեղծագործությունը որոշակիորեն տարբերվում է Երուխանի ստեղծագործությունից: Օշականը,

ներկայացնելով իր հերոսների ներաշխարհի դրաման, ներկայացնում է նաեւ բարքեր, սովորույթներ:

Շարունակելի

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաքաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 1.3.2016 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ